ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 26/10» ծածկագրով գնման ընթացակարգի
«Գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի»

ք. Էջմիածին **«07» սեպտեմբերի 2026 թ.**

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝
Վաղարշապատ համայնքի ղեկավարի խորհրդական՝ Բ. Նիկողոսյան

Հանձնաժողովի անդամներ՝
Աշխատակազմի գնումների բաժնի պետի տեղակալ՝ Խ. Զազյան

Աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Մ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Աշխատակազմի գնումների բաժնի պետ՝ Շ. Պողոսյան

1. Տեղեկություններ «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 26/10» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և պայմանագիր կնքելու որոշման մասին.

1.1 Գնահատող հանձնաժողովը «27» օգոստոսի 2026 թ. N 4 արձանագրությամբ որոշել էր հաստատել ընտրված ճանաչված մասնակիցների գնահատման արդյունքները, ինչպես նաև «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 26/10» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից էր հայտարարել նաև «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ին և առաջարկել կնքել պայմանագիր **3, 4, 5, 6** չափաբաժինների համար:

2. Տեղեկություններ ընտրված ճանաչված մասնակցի կողմից պայմանագրի կնքման առաջարկից հրաժարվելու մասին.

2.1 Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝ Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

2.2 Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ..., ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

3. «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 26/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումների մասին.

3.1 Գնահատող հանձնաժողովը որոշում է ուժը կորցրած ճանաչել Գնահատող հանձնաժողովի «13» օգոստոսի 2026 թ. N 3 արձանագրությամբ հաստատված 5.3 կետը, «27» օգոստոսի 2026 թ. N 4 արձանագրությամբ հաստատված 1.2 կետը:

3.2 Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետի պահանջներով՝ Պատվիրատուի ղեկավարին կառաջարկի դիմել ՀՀ Ֆինանսների նախարարությանը՝ «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3.3 Գնահատող հանձնաժողովը որոշում է գնման ընթացակարգի **3, 4, 5, 6** չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները:

Հանձնաժողովի նախագահ՝
Վաղարշապատ համայնքի ղեկավարի խորհրդական՝ Բ. Նիկողոսյան

Հանձնաժողովի անդամներ՝
Աշխատակազմի գնումների բաժնի պետի տեղակալ՝ Խ. Զազյան

Աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Մ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Աշխատակազմի գնումների բաժնի պետ՝ Շ. Պողոսյան